

2011թ. հուլիս ամսվա խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամսական ամփոփ ցուցանիշների վերլուծություն

« ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել և վերլուծության է ենթարկվել «խոշոր հարկ վճարողների հարկային վճարումների մոնիտորինգի հրապարակման ենթակա 2011թ.-ի հուլիս ամսվա ամփոփ ցուցանիշները» համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով հաստատված խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2011թ.-ի ընթացքում սպասարկվող 440 հարկ վճարողների ցանկի, որի արդյունքում պարզվել է.

1. Իրացումից հասույթը 2011թ.-ի հուլիս ամսին կազմել է 203.7 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ աճել է 4.3 %-ով: Ընդ որում, հարկ է նշել, որ նշված ցուցանիշի առումով աճ արձանագրվել է 238 կազմակերպությունների մոտ՝ 34.1 մլրդ դրամով և նվազել 197-ի մոտ՝ 25.3 մլրդ դրամով:

2. Խոշոր հարկ վճարողների կողմից ներմուծման ծավալները այս տարվա հուլիս ամսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ նվազել են 5.8 %-ով և կազմել 58.8 մլրդ դրամ: Ընդ որում, հարկ է նշել, որ ներմուծման ծավալները աճել են 139 կազմակերպությունների մոտ շուրջ 17.4 մլրդ դրամով և նվազել՝ 167-ի մոտ համապատասխանաբար 20.8 մլրդ դրամով:

3. Արտահանման ծավալները 2011թ.-ի հուլիսին կազմել է 32.5 մլրդ դրամ նախորդ տարվա նույն ամսվա 18.4 մլրդ դրամի փոխարեն կամ ավել 14.5 մլրդ դրամով:

4. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2011թ.-ի հուլիս ամսին խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 20.6 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2011թ.-ի հուլիս ամսին վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 57.5 %-ը:

5. 2011թ.-ի հուլիսին հարկային մարմնի կողմից կատարվել են 64 հարկային ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 766.7 մլն դրամի չափով:

6. 01.08.2011թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 75.2 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 52.2 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 11.8 մլրդ դրամ: Բացի այդ, 2011թ.-ի հուլիս ամսվա ընթացքում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 1670.6 մլն դրամի չափով: